

Լախ՝ պատմական ակնարկով ներկայացնենք, թե տնտեսագիտության մտքի զարգացման պատմության մեջ երբ է հայեցակարգային մակարդակով առաջին անգամ կարելի դարձել արտաքին առևտրային քաղաքականությունը՝ որպես երկրի տնտեսական քաղաքականության կարելի բաղադրիչ:

Տնտեսագիտության բուն պատմությունը սկսվում է մերկանտիլիստներից, ովքեր յուրովի ներկայացրին հարստության ստեղծման հիմնախնդրի լուծումը: Եվ դա պատահական չէ, որովհետեւ դեռեւս Արիստոտելի ժամանակներից տնտեսագիտությունը համարվում էր արվեստ, գիտություն՝ հարստությունն ավելացնելու ուղիների ուսումնասիրության մասին: Մերկանտիլիստները նկատել են, որ հարուստ ու հզոր են այն երկրները, որոնք նշանակալի դեր են խաղում համաշխարհային առևտրի ոլորտում: Դրա հիման վրա էլ հանգեցին այն հետեւության, որ երկրի հարստությունը ստեղծվում է շրջանառության բնագավառում, մասնավորապես՝ արտաքին առևտրի միջոցով:

Մերկանտիլիզմի տնտեսական քաղաքականությունը՝ հովանավորչությունը, կարելի էր Ե խաղացել կապիտալի նախասկզբնական կուտակման ընթացքն արագացնելու և առևտրային կապիտալի գործունեությունն աշխուժացնելու գործում:

Մերկանտիլիզմն առաջին անգամ կարելի էր պետության տնտեսական, կառավարչական գործառույթը, մասնավորապես՝ արտաքին առևտրային քաղաքականության իրականացումը և դրա շնորհիվ՝ «ակտիվ առևտրային հաշվեկշիռ» ապահովումը: Այս խնդիրը ոչ պակաս կարելի էր և՛ առևտրային շուկայական, տնտեսական հարաբերությունների ձևավորման փուլում գտնվող զարգացող երկրներում, որտեղ արտաքին առևտրի ոլորտում հովանավորչական քաղաքականության իրականացումը երբեմն որակվում է որպես «նորմերկանտիլիզմ»:

Արտաքին առևտրային քաղաքականությունն իրենից ներկայացնում է միջոցառումների համակարգ, որն ուղղված է ներքին շուկայի պաշտպանությանը, արտաքին առևտրային ծավալների ավելացման խթանմանը և առևտրի ոլորտում կառուցվածքային փոփոխությունների իրականացմանը: Տնտեսական հարաբերությունների պետական կարգավորման հիմնական գործիքներից մեկն էլ մաքսային քաղաքականությունն է, որն ունի երկու ուղղություն՝ հովանավորչություն և ազատ առևտրի հայեցակարգ:

Մաքսային քաղաքականությունն իրականացվում է սակագնային և ոչ սակագնային կարգավորմամբ:

Սակագնային կարգավորումն արտահայտվում է արտաքին առևտրային շրջանառության առանձին ապրանքա-

տեսակների ներմուծման և /կամ/ արտահանման համար մաքսատուրքերի սահմանմամբ:

Մաքսատուրքը առանձին ապրանքների ներմուծման և /կամ/ արտահանման համար գանձվող հարկ է: Օրենսդրորեն՝ մաքսատուրքը սահմանվում է որպես մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման համար պետական բյուջե գանձվող պարտադիր վճար:

Ոչ սակագնային կարգավորումը տնտեսական, վարչական և տեխնիկական (բացառությամբ մաքսատուրքի) միջոցների ամբողջություն է, որով պետությունը կարգավորում է արտաքին առևտուրը: Օրենսդրորեն՝ ոչ սակագնային կարգավորման միջոցները սահմանվում են որպես մաքսային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերով սահմանված այնպիսի միջոցներ, որոնք ուղղակիորեն չազդելով մաքսային վճարների մեծության վրա՝ սահմանափակում են արտաքին առևտուրը:

Ոչ սակագնային կարգավորման միջոցներն օրենսդրական մակարդակում ներկայացված են սահմանափակումների տեսքով, սակայն արտաքին առևտրի վրա պետական ներգործության խնդիրներից կախված՝ ոչ սակագնային կարգավորման միջոցները դասակարգվում են.

✓ արգելքներ, սահմանափակումներ, խոչընդոտներ,

✓ խթաններ, որոնք կիրառվում են արտաքին առևտրի պետական կարգավորման ժամանակ:

Անդրադառնալով մաքսային գործի այն բնագավառին, որը, մեր կարծիքով, ենթակա է կատարելագործման:

Մաքսային գործը և դրա շրջանակներում ծագող հարաբերությունները դիսամիկ զարգացող ոլորտ է, ուստի՝ այն կարգավորող օրենսդրական դաշտն էլ պետք է ենթարկվի համապատասխան փոփոխությունների: Տվյալ դեպքում փոփոխություններն իրականացվում են իրավական գործող ակտերից մի մասն ուժը կորցրած ճանաչելու, իրավական նոր ակտերի ընդունելու, ինչպես նաև առանձին ակտերում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու միջոցով: Մաքսային գործի բնագավառում որպես մաքսային ռեժիմների առանձին խումբ են ներկայանում ժամանակավոր ներմուծման և արտահանման հարաբերությունները կարգավորող ռեժիմները, որոնց կատարելագործման հարցը շարունակում է պահպանել արդիականությունը:

Գործող ընթացակարգի համաձայն՝ **ՀՀ կառավարությունը կարող է թույլատրել «ժամանակավոր ներմուծում» վերամշակման համար» մաքսային ռեժիմով հայտարարագրված ապրանքների բացթողումը կամ ներմուծված ապրանքների նկատմամբ կիրառված «ժամանակավոր ներմուծում» վերամշակման համար» մաքսային ռեժիմի ժամ-**

ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՅՆԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՐՁԻ ՇՈՒՐՁ

Ատենախոսության թեմա՝
Մաքսային հարաբերությունների ոչ սակագնային կարգավորման հիմնախնդիրները ՀՀ-ում

Գիտական ղեկավար՝
Կառլեն ԱԲԳՈՐՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու,
պրոֆեսոր

Մարգար
ՍՈՒՔՈՅԱՆ

ՀՊՏՀ
**«Մաքսային
և ապահովագրական
գործ»
ամբիոնի
ասպիրանտ**



կետի երկարաձգումը միայն մեկ անգամ՝ մինչև վեց ամիս ժամկետով:

Յարկ է նկատել, որ նմանատիպ դրույթ սահմանված է նաեւ «ժամանակավոր արտահանում» վերամշակման համար» մաքսային ռեժիմի դեպքում:

Ինչ վերաբերում է «**ժամանակավոր ներմուծում**» մաքսային ռեժիմին, ապա դրանով բաց թողնված ապրանքների ներմուծման ժամկետը նշված ռեժիմով մեկ տարուց ավելի ժամկետով երկարաձգվում է 33 կառավարության կողմից միայն ֆինանսական վարձակալության տրման նպատակով «**ժամանակավոր ներմուծում**» մաքսային ռեժիմով բաց թողնված USQ ԱՍ 84-ից 89-ը ապրանքային ծածկագրերին դասվող ապրանքների համար:

Ֆինանսական վարձակալության տրման նպատակով «**ժամանակավոր ներմուծում**» մաքսային ռեժիմով բաց թողնված USQ ԱՍ 84-ից 89-ը ապրանքային ծածկագրերին դասվող ապրանքների համար «**ժամանակավոր ներմուծում**» մաքսային համար խնդրարկվող ժամկետը չի կարող գերազանցել ֆինանսական պայմանագրի գործողության ժամկետը:

33 կառավարությունը կարող է թույլատրել պետության կարիքների, գիտահետազոտական, կրթական, մշակութային, մարդկանց եւ կենդանիների առողջության պաշտպանության նպատակներով ներմուծված ապրանքների համար «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմի ժամկետի երկարաձգումը մեկ տարուց ավելի ժամկետով:

Նշված ժամկետային սահմանափակումը կիրառվում է նաեւ «ժամանակավոր արտահանում» մաքսային ռեժիմով տեղափոխվող ապրանքների նկատմամբ:

Մաքսային օրենսգրքից բացի, նշված հարաբերությունները կարգավորվում են նաեւ 33 կառավարության՝ «Մեկ տարուց ավելի ժամկետով «ժամանակավոր ներմուծում» վերամշակման համար», «ժամանակավոր ներմուծում», «ժամանակավոր արտահանում», «ժամանակավոր արտահանում» վերամշակման համար» մաքսային ռեժիմներով ապրանքների բաց թողնման կարգը սահմանելու մասին» 09.11.05թ. թիվ 1934-Ն որոշմամբ, որի համաձայն՝ ապրանքներ տեղափոխող անձը ռեժիմի ժամկետի երկարաձգման թույլտվություն ստանալու դիմումը պարտավոր է 33 կառավարության աշխատակազմ ներկայացնել ապրանքի՝ համապատասխան մաքսային ռեժիմի թույլտվության ժամկետը լրանալուց առնվազն երկու ամիս առաջ: Սակայն սահմանված չէ 33 կառավարության կողմից ապրանքներ տեղափոխող անձին նշյալ թույլտվությունը տրամադրելու կամ այն մերժելու ժամկետը:

Ընդ որում՝ սահմանված ժամկետը լրանալուն հաջորդող տասն օրվա ընթացքում ապրանքները պետք է ձեւակերպվեն «Վերարտահանում» մաքսային ռեժիմով՝ նախկինում «ժամանակավոր ներմուծում» վերամշակման համար», «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմներով ձեւակերպված լինելու դեպքում կամ «Վերաներմուծում» մաքսային ռեժիմով՝ նախկինում «ժամանակավոր արտահանում», «ժամանակավոր արտահանում» վերամշակման համար» մաքսային ռեժիմներով ձեւակերպված լինելու դեպքում կամ հանձնվեն մաքսային մարմինների պատասխանատու պահպանությանը, որոնց ընթացքում արտահանման կամ ներմուծման պարտավորությունը համարվում է չխախտված:

Ուշագրավ է փաստը, որ **հետագա արտահանման պարտավորությամբ 33 ներմուծված ապրանքները եւ տրանսպորտային միջոցները սահմանված ժամկետում չարտահանելու կամ հետագա ներմուծման պարտավորությամբ արտահանված ապրանքներն ու տրանսպորտային միջոցները սահմանված ժամկետում 33 չվերադարձնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ այդ ապրանքների եւ տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի 10%-ի չափով:**

Յետագա արտահանման կամ ներմուծման սահմանված ժամկետը խախտելու համար ապրանքներ տեղափոխող անձը պարտավոր է վճարել սահմանված մաքսային ռեժիմներով նախատեսված մաքսային վճարների ուշ վճարման տույժերը՝ հաշվարկված սահմանված ժամկետի ավարտից:

Գործնականում հնարավոր են դեպքեր, երբ ապրանքներ տեղափոխող անձը մինչև սահմանված ժամկետի ավարտը 33 կառավարությունից չի ստանում ռեժիմի ժամկետի երկարաձգման թույլտվության տրամադրման կամ մերժման մասին որոշումը: Միաժամանակ՝ սահմանված տասնօրյա ժամկետում տեխնիկապես անհնար կամ ֆինանսապես ոչ շահավետ է այդ ապրանքների վերարտահանումը կամ վերաներմուծումը, կամ էլ մաքսային մարմինների պատասխանատու պահպանությանը հանձնելը:

Արդյունքում՝ ապրանքներ տեղափոխող անձը, կատարելով մաքսային օրենսդրության բոլոր պահանջները, հայտնվում է կարգազանց ԱՏԳ մասնակցի կարգավիճակում:

Առկա խնդիրների լուծման համար առաջարկվում է սահմանել ժամկետային պարտավորություն 33 կառավարության կողմից քննվող մաքսային ռեժիմի շրջանակներում կատարվող գործողությունների նկատմամբ:

Անհրաժեշտության դեպքում չենք բացառում նաեւ երկու ամիս ժամկետի փոփոխությունը, որը կհիմնավորվի անհրաժեշտ ընթացակարգերի ու փաստաթղթաշրջանառության տեւողությամբ: